

Շրջակա միջավայրի նախարարության

«Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ

ԱԳՐՈՕԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ

ՏԵՂԵԿԱԳԻՐ

2025

Մայիսի երրորդ տասնօրյակ

Տեղեկագիրը կազմել է ագրոօդերևութաբանության բաժինը՝ մասնագիտացված ագրոօդերևութաբանական կայաններից ստացված տեղեկատվության հիման վրա:

Տեղեկագրի պատասխանատու՝ տնօրենի տեղակալ Գ. Սուրենյան

ՀԻՄՆԱԿԱՆ ՕԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մայիսի երրորդ տասնօրյակում օդի միջին ջերմաստիճանը հանրապետության շրջանների զգալի մասում բարձր է եղել նորմայից 1-2 աստիճանով, տեղ-տեղ՝ նորմային մոտ:



Տասնօրյակի ամենաբարձր ջերմաստիճանները դիտվել են 25-ին և 29-ին. Տավուշում +29...+31^{0}C, Վայոց ձորի լեռնային շրջաններում՝ +20...+22^{0}C, նախալեռնային շրջաններում՝ +32...+34^{0}C, Սյունիքի հովտային շրջաններում՝ +34...+36^{0}C, նախալեռնային շրջաններում՝ +26...+28^{0}C, Շիրակում՝ +19...+24^{0}C, Կոտայքի լեռնային շրջաններում՝ +20...+22^{0}C, նախալեռնային շրջաններում՝ +26...+28^{0}C, Գեղարքունիքում՝ +20...+24^{0}C (Սեմյոնովկա՝ 18^{0}C), Լոռիում՝ +21...+25^{0}C, Արմավիրում, Արարատում՝ +30...+32^{0}C, Արագածոտնի լեռնային շրջաններում՝ +20...+22^{0}C, նախալեռներում՝ +23...+25^{0}C (Աշտարակ՝ +31^{0}C):

Տասնօրյակի ամենացածր ջերմաստիճանները դիտվել են 22-ին և 31-ին. Շիրակում՝ +3...+5^{0}C (Աշոցք՝ -3^{0}C), Կոտայքի լեռնային շրջաններում՝ +4...+6^{0}C (Հանքավան՝ +1^{0}C), նախալեռնային շրջաններում՝ +9...+11^{0}C, Տավուշում +7...+9^{0}C, Վայոց ձորի լեռնային շրջաններում՝ +3...+5^{0}C, նախալեռնային շրջաններում՝ +9...+11^{0}C, Սյունիքի հովտային շրջաններում՝ +11...+14^{0}C, նախալեռնային շրջաններում՝ +3...+8^{0}C, Գեղարքունիքում՝ +2...+7^{0}C, Լոռիում՝ +3...+6^{0}C, Արմավիրում՝ Արարատում՝ +10...+14^{0}C (Արմավիր՝ +8^{0}C), Արագածոտնի լեռնային շրջաններում՝ +1...+4^{0}C, նախալեռներում՝ +9...+12^{0}C:

Տասնօրյակի ընթացքում տեղումների գումարային քանակը Շիրակում կազմել է 3-23մմ (8-92%), Լոռիում՝ 19-30մմ (42-91%), Տավուշում՝ 8-11մմ (23-46%), Արագածոտնի լեռնային շրջաններում՝ 13-15մմ (39-63%), նախալեռներում՝ 2-6մմ (15-29%), Գեղարքունիքում՝ 3-25մմ (14-114%), Կոտայքի լեռնային շրջաններում՝ 10-18մմ (45-64%), նախալեռներում՝ 15մմ (79%), Վայոց ձորի լեռնային շրջաններում՝ 5մմ (15%), նախալեռներում՝ 0.2մմ (1%), Արմավիրում՝ 6-8մմ (50-65), Արարատում՝ 0.2-1մմ (2-10%), Սյունիքի հովտային շրջաններում՝ Կապան 1մմ (27%), նախալեռներում՝ 3-5մմ (12-14%):

Վեգետացիոն ցուցիչի արժեքն ըստ արբանյակային տվյալների

Ելնելով Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության (FAO) պաշտոնական կայք էջում տեղադրված վեգետացիոն ցուցիչի քարտեզից՝ մայիսի երրորդ տասնօրյակում հանրապետությունում մշակաբույսերի աճն ու զարգացումն ընթացել է բազմամյա միջին ժամկետներում:

Շրջանների զգալի մասում վեգետացիոն ցուցիչը հասել է առավելագույն արժեքի:

Վեգետացիոն ինդեքսի ընթացիկ ընթացքն անցյալ տարվա և բազմամյա միջինի համեմատ





















Մշակաբույսերի աճն ու զարգացումը

Տասնօրյակի ընթացքում շարունակվել է գյուղատնտեսական մշակաբույսերի աճն ու զարգացումը: Հովտային շրջաններում բազմամյա միջին ժամկետներում սկսվել է աշնանացան ցորենի կաթնային հասունացումը, նախալեռնային շրջաններում այն հասկակալել է, լեռնային շրջաններում շարունակվել է գտնվել ծեղացողունի ներքին հանգույցների առաջացման փուլում, գարնանացան գարին թփակալել է:

Հովտային շրջաններում առաջացել են բանջարանոցային մշակաբույսերի ծաղկաբույլերը, ծխախոտի հինգերորդ և յոթերորդ տերևները, խաղողի վազը մասսայական ծաղկել է, կատարվել է առվույտի առաջին հունձ, տեղի է ունենում պտղատուների պտուղների հասունացում:

Նախալեռնային շրջաններում շարունակվել է պտղատուների պտղի աճը, լեռնային շրջաններում հնդավորների ծաղկումն ավարտվել է: